

Հայ արվեստաբանության հուսալի ներուժը

ԱՆՈՒՇ ՍԱՄՎԵԼՅԱՆ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի արվեստի ինստիտուտը 2008-ին կրկին գործունեության 50 տարին: Իր կետարյա գոյության ընթացքում առաջին անգամ 2005 թվականին ինստիտուտը նախաձեռնել է անցկացրել է հայ երիտասարդ արվեստաբանների գիտաժողով: Շուրջ 40 երիտասարդ-արվեստաբանների համախմբած գիտական այդ նստաքննարկի հաջողությունը, ԳԱԱ արվեստի ինստիտուտի սնույթն, արվեստագիտության դոկտոր **Արարատ Աղայանի** վկայությամբ այնքան մեծ էր,

որ դեռ երկու տարի առաջ գիտաժողովը ավանդական դառնալու հայտ ներկայացրեց: Հերթական՝ երկրորդ գիտական նստաքննարկը երիտասարդ հայ արվեստաբանները գումարեցին երեկ՝ ծրագրում ունենալով 13 զեկուցում արվեստի մի քանի մյուսերի ընդգրկումով՝ կերպարվեստ, երաժշտություն, ճարտարապետություն, կինո, թատրոն: Չեկուցողները ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի, Կոմիտասի անվան Պետական կոնսերվատորիայի, Երեւանի գեղարվեստի Պետական ակադեմիայի, Երեւանի թատրոնի եւ կինոյի Պետական ինստիտուտի, Հայաստանի ազգային Պետական թատրոնի, Խ.Աբովյանի անվան Պետական մանկավ-

արժական ինստիտուտի երիտասարդ գիտնականներ էին, որոնցից 7-ը՝ արվեստագիտության թեկնածուներ:

«Այսօր, երբ հանրադատության բարձր դեկլարությունը միանգամայն իրավացիորեն հայագիտությունը հռչակել է գիտության զարգացման ռազմավարական գերակա ուղղություն՝ առանձնահատուկ ուշադրություն ցուցաբերելով հայագիտության աստիճանում գործող երիտասարդ հետազոտողների հանդեպ, մենք կարող ենք փաստել, որ հայ արվեստի ուսումնասիրության գործը դարձել է առավել նշանակալից ու բազմակողմանի, եւ արդեն դարձրուց ուրվագծվում է արդի արվեստաբան-

ների արժանի հերթափոխը»,-հնչեց ինստիտուտի սնույթնի բացման խոսքում:

Անուշուհ, երիտասարդությունը ոչ միայն ղեկ է փոխարինի, այլեւ շատ դեղեկում գերազանցի ավագներին, հակառակ դեղեկում՝ դա ավագների թերացումն է:

Գիտաժողովին ներկայացված թեմաների յուրաքանչյուրն անգամ կարող է վկայել երիտասարդ արվեստաբանների հետաքրքրությունների բազմակից եւ ազգային արվեստի ակունքներում նորը, մինչեւ այժմ կարծես աննկատ մնացած կամ համեմատաբար քիչ ուսումնասիրված շրջանները եւ մեկնաբանելու ձգտման մասին: «Սյուրռեալիզմի

տարրերն Արչիլ Գոբլու արվեստում», «Նկատառումներ դոստոևսկույի բազմաբնույթի հայ երաժշտության մասին», «Փանոս Թերլեմեզյանը եւ Կոմիտասը», «Ռոմի իմաստավորման հարցերը Երեւանի հետախորհրդային բազմաբնույթի ճարտարապետության մեջ» եւ այլն: Ակնհայտ է, որ այդ եւ մյուս թեմաներից յուրաքանչյուրի ուսումնասիրությունը հիմնված է ազգային մշակութային հենքի վրա, եւ այս երիտասարդներն առաջին հերթին ազգային արվեստի, ազգային մշակութային ջանքերի մեջ են:

Մի բան, սակայն, անհասկանալի մնաց. ինչո՞ւ են հայ երիտասարդները հայ արվեստի մասին հայ ունկնդրի առջեւ

Հայաստանում զեկուցում կարողանալու հայերեն լեզվով: Չեկուցումների գրեթե կեսը մասնագետներին էր նվիրված: Երիտասարդների բացառությունները, թե՛ «արգելված է» կամ «ես ուսուցիչ եմ մտածում», ոչ միայն սղոթիչ էին, այլեւ անընդունելի էին:

ԳԱԱ արվեստի ինստիտուտի սնույթնը խոստացավ, որ հաջորդ՝ 2008 թ. նոյեմբերին ինստիտուտի 50-ամյակի առթիվ կազմակերպվելիք երիտասարդ հայ արվեստաբանների գիտական երրորդ նստաքննարկի զեկուցողների առջեւ ՀՀ օրենքը եւ մայրենի լեզուն հարգելու խնդիր կդրվի: